դահլիճների մէջ, նոագներ էին հնչում, իսկ ներքեւում, մթին նկուղների մէջ՝ որոտում էին այդ թշոառների շղթաները: Նրա ծաղկազարդ բակերի մարմարեայ սալայատակը ոչ սակաւ անգամ սրսկոած է եղել անմեղ զոհերի արիւնով, եւ նրա գեղեցիկ, սաղարթախիտ ծառերը ոչ սակաւ անգամ կախաղանի պաշտօն են կատարել... Այդ բոլորը կատարոել է խուլ պարիսպների մէջ, լուսնի լոյսի ներքոյ, եւ աւազանների խաղաղ հայելին ցոլացրել է իր մէջ եղեռնական գործողութիւնների սոսկալի պատկերները... Դրսի աշխարհը երբեք տեղեկութիւն չէ ունեցել, թէ ինչ է կատարոել ներսում... Սէրը, ուրախութիւնը, զեխութիւնը միշտ թագաւորել է այստեղ գազանային անգթութեան հետ...

Երեխայութիւնիցս ես սովորած էի սարսափել, դողալ մեծ մարդերի առջեւ, այդ պատճառով մինչեւ փաշային ներկայանալը, ինձանում սիրտ չէր մնացել: Ասլանը նկատեց իմ երկչոտութիւնը եւ, մի կողմից յանդիմանելով, միւս կողմից խրախուսելով, ասաց.

— Դու տակաւին ստրկահոգութեան մէջ ես մնացել, ինչո՞ւ ես շփոթւում, մի՞ թէ նա էլ քեզ նման մարդ չէ, միթէ ահեղ աստուծոյ առջեւ պիտի դուրս գաս...

Ես փոքր-ինչ հոգի առայ, աւելի ամաչելուց, քան թէ քաջալերութիւն ստանալուց:

Փաշան, եթէ կարելի է այսպէս կոչել, մի ահագին մսեղէն բլուր էր, հաստ փորով, հաստ գլխով, հաստ ձայնով, մի խօսքով, նրա մէջ ոչինչ նուրբ եւ տաշած բան չկար: Նուրբ էր նրա մէջ միայն տաճկական բարձր պաշտօնակալի բնական խելքը, խորամանկութիւնը, կեղծաւորութիւնը, որ նենգաւորութեան էր հասնում: Նա խիստ քաղաքավարութեամբ ընդունեց մեզ, եւ իր մանկլաւիկների օգնութեամբ, որոնք նրա աջ ու ձախ թեւքերից բռնելով վեր բարձրացրին, կանգնեց եւ, մի քանի քայլ փոխելով, մօտեցաւ բռնեց Ասլանի ձեռքը:

— Իմ բախտաւորութեանը չափ չկայ, — ասաց նա, — որ իմ տան շեմքը արժանանում է ընդունել ձեզ պէս թանկագին հիւրին, պարոն բժշկապետ:

Փաշան Ասլանի աջը չթողեց իր ձեռքից, տարաւ նրան, նստեցրեց իր մօտ, աջ կողմում: Ես մնացի ոտքի վրայ կանգնած, դահլիճի դռան մօտ: Գիտէի այդ սովորութիւնը եւ մի քանի անգամ տեսել էի, թէ ինչպէս զինուած ծառաները սպասաւորում են իրանց տիրոջը, հենց միեւնոյն սենեակում, ուր նա ընդունելութիւն է գտնում մի օտարի մօտ: Ծառան այդ դէպքում թիկնապահ է, մի քաջ վերահսկող է, որ, ձեռքը իր սրի կոթի վրայ դրած, ամենայն զգու-